Հաստատում եմ՝

Տնօրեն ----------Ս. Ենգիբարյան

«31» օգոստոսի 2022թ.

Ուսումնական հաստատության դասղեկի

տարեկան աշխատանքային ծրագիր

Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ

«Ներսիսյան» թիվ 6 հիմնական դպրոց

Դասարան 9 բ

Դասղեկ Ն. Դարբինյան

Դասարանի ղեկավարի դաստիարակչական աշխատանքների թեմատիկա

•	Կարծրատիպեր և նախապաշարմունքներ
•	Ուրիշներին ընկալելը
•	Ինչ է կարծրատիպը
•	Կարծրատիպերի առաջացման պատճառները
•	Հիմնավոր ընդհանրացումների կատարում
•	Սեր և հայրենասիրություն
•	Քաջություն
•	Օրինապահություն
•	Հանդուրժողականություն
•	Լավատեսություն
•	Համբերություն
•	Միասնություն
•	Հուսալիություն
•	Նրբազգացություն
•	Հոգատարություն

Դասարանի ծնողական խորհրդի կազմ

Նախագահ	Արմենակյան Արուսյակ
անդամներ	Գրիգորյան Մերի
անդամներ	Ստեփանյան Արփինե

Դասարանի աշակերտական խորհրդի կազմ

Ավագ	Բաղալյան Սուրեն
օգնական	Մանվելովա Ասյա
օգնական	Միրզախանյան Մարի

Դասարանում սովորող աշակերտների կազմը

21	Տղա
13	Աղջիկ

Ուսումնակադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակություն

- Դաստիարակչական խնդիրների ճշգրտություն ու իրատեսություն
- Դասարանի աշակերտների վերաբերյալ սպառիչ տեղեկությունների հավաքում
- Դասագրքերի հանձնում
- Հետևել, որպեսզի աշակերտները խնամքով վերաբերվեն աշակերտական գույքին
- Օրվա ընթացքում նպաստել, որպեսզի աշակերտները ձեռք բերեն ներքին կարգապահական կուլտուրա, կարողանան ցածրաձայն խոսել, քաղաքավարի պահվածք ունենալ, կատարվող աշխատանքներին նաև մասնակից դարձնել նաև ծնողներին
- Սահմանել հսկողություն աշակերտների հաճախումներին, առաջադիմությանը, կարգապահությանը, ինչպես նաև սահմանված հերթապահությանը
- Աշակերտների առաջադիմությունն ու դաստիարակությունը վերահսկելու նպատակով կատարել դասալսումներ տարբեր առարկաներից
- Կազմակերպել ծնողական ժողովներ աշակերտների առաջադիմության, վարքի, դասղեկ-ծնող-ուսուցիչ կապը ամրապնդելու նպատակով
- Ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապի ապահովումը
- Դասավանդվող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականության ապահովում
- Աշակերտների գործունեության կազմակերպման զուգակվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում
- Դասագրքերի հավաքում

- Կիսամյակներն ու տարին ամփոփելու համար կազմակերպել ծնողական ժողովներ

9բ դասարանում սովորում է 34 աշակերտ 21 տղա, 13 աղջիկ: Աշակերտները հանգիստ են, ընկերասեր, միմյանց հանդեպ հարգալից:Դասարանում տիրում է առողջ մթնոլորտ: Աշակերտները հաճույքով օգնում են միմյանց: Աշակերտների միջև կոնֆլիկտը լուծվում է խոսքի և փոխըմբռնման միջոցով:

1.Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակություն/պլան/

Կատարման ժամկետը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն
սեպտեմբեր	Դաստիարակչական խնդիրների ճշգրտում և իրատեսություն
սեպտեմբեր	Դասարանի աշակերրտների վերաբերյալսպառիչ տեղեկությունների հավաքում
սեպտեմբեր	Դասագրքերի հանձնում
Ողջ տարին	Հետևել, որպեսզի աշակերտները խնամքով վերաբերվեն գույքին
Ողջ տարին	Օրվա ընթացում նպաստել, որպեսզի աշակերտները ձեռք բերեն ներքին կարգապահական կուլտուրա
Ողջ տարին	Սահմանել հսկողություն աշակերտների հաճախումներին, առաջադիմությանը, կարգապահությանը, հերթապահությանը
Ողջ տարին	Աշակերտների առաջադիմությունն ու դաստիարակությունը վերահսկելու նպատակով կատարել դսալսումներ տարբեր առարկաներից
Ողջ տարին	Կազմակերպել ծնողական ժողովներ աշակերտների առաջադիմության, վարքի, շնողների հետ կապը ամրապնդելու նպատակով
Ողջ տարին	Ներդասարանական, ներդպրոցականն արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապի ապահովում
Ողջ տարին	Դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ուաշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականության ապահովում
Մայիս	Դասագրքերի հավաքում
Դեկտեմբեր և հունիս	Կիսամյակներն ու տարին ամփոփելու համար կազմակերպել ծնողական ժողովներ

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող ուղղություններն ուսումնական տարվա ընթացքում

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ներառում են՝

ա/Վերահսկողություն դասապրոցեսի նկատմամբ,աշակերտների կարգապահության,հաճախումների,առաջադիմության մշտական ստուգում:

բ/Դասարանական և ծնողական ժողովների կազմակերպում,երեխաների համակողմանի դաստիարակությանը օժանդակելու նպատակով:

գ/Արտադասարանական դաստիարակչական աշխատանքների կազմակերպում՝ զեկուցումների,քննարկումների,էքսկուրսիաների նախապատրաստում և անցկացում:

3.Հայեցի դաստիարակություն

ա/Հոգևոր դաստիարակություն-Նպաստել հայրենիքի պատմության ,մշակույթի,հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի ,ազգային ավանդույթների,եկեղեցական և ժողովրդական տոների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը:

բ/Գեղագիտական դաստիարակություն-Ցուցահանդեսների ,ներկայացումներ դիտում,այցելություններ կինո,թատրոն,թանգարաններ:Նպաստել երեխաների նկարչական,սպորտային,պրային և երաժշտական ունակությունների բացահայտմանը և զարգացմանը:

գ/Ռազմահայրենասիրական դաստիարակություն- Սովորողների հայրենասիրական դաստիարակության խորացման նպատակով զրուցել մեծ հայրենասերիների,ազատամարտիկների և հայոց բանակի մասին:

դ/Ֆիզիկական դաստիարակություն- Սովորողների մոտ համոզմունք դարձնել «Առողջ մարմնում առողջ հոգի» ճշմարտությունը:Նպաստել միջդասարանային,միջդպրոցական մրցույթների,էքսկուրսիաների,արշավների և երթերի կազմակերպմանն ու անցկացմանը:

Ե/Աշխատանքային դաստիարակություն- Հետևողական լինել դասասենյակի մաքրության պահպանմանը ,խթանել շաբաթօրյակներին աշակերտների ակտիվ մասնակցությանը,որը կնպաստի դպրոցականների մոտ աշխատասիրության ,կարգապահության,պատասխանատվության բարձրացմանը:

4.Դպրոց-ընտանիք կապը

- Ծնողների հետ անմիջական շփման ապահովում:
- Ծնողական ժողովների կազմակերպում,անցկացում:
- Ծնողների հետ անհատական զրույցների անցկացում: